

եւս քանի մը սակաւագիւտ և հետաքրքրական ձեռագիրներ, որոնց մէջ անուանի է հատոր մը թ. Գարուն գրուած. հարիւր յիսուն հատորի չափ ալ տպագրեր: Եկեղեցւոյ մէջ և քովերը բազմաթիւ գերեզմաններ կան որոնց տապանա- քարերուն վրայ տեղ տեղ անուանի մարդկանց աւ նուններն ալ կը կարգադրուին: Այսինքն Բանա- յիօթաքիէն զտո՝ յունական եկեղեցւոյն պաա- րիարքներ, որ այս վերջին դարուն մէջ ապրած են: Տիմոթէոս՝ 1622ին մեռած, Կիւրեղ Վ. և Լը- րեւտացիին՝ հինգ անգամ պատրիարք եղած է 1622էն 1641 մէջ: Պարթէնիոս Բ. Պարթէ- նիոս Գ. որ վեց տարի միայն պատրիարք ե- ղած է, և մեռած է 1655ին, Կալինիկոս Բ. մե- ռած է 1702ին. Գաբրիէլ Գ. 1707ին, Բեւեղիէլ Բ. 1756ին: Շատ մը վանահայրք թաղուած են, այս պատրիարքաց գերեզմանաց քով:


Գպրոցէն քիչ մը հեռու, Խուսաց գերեզմա- տան մօտ, տապան մը կայ որ գրեթէ վիպասա- նական պատմութիւն մը ունի, և շատ զարմա- նալի կուգայ, հին Բիւզանդիոնի յիշատակներէն դուրս ելլելէն վերջը՝ այն տեղերը գտնուելը. Անգղիացի գեսպանին գերեզմանն է. Պարոն Ն. զուարթ Պարսն կամ Պարգն անուամբ. այս երկրորդ գեսպանն է Մեծին Բրիտանիոյ Թա- գաւորութեան բարձրագոյն Գրան քով: Անգ- ղիացւոց Թագուհւոյն մեծապատիւ և պերճա- պայծառ Զարտարախօրը, ինչպէս որ լտտիներէն գրուած է գերեզմանաքարին վրայ, մեծին Նղի սաբեթի ներկայացուցիչը Սուլթան Մուրատ Բին՝ և Սուլթան Մէհմետ Գին ժամանակ: Այս վերջին Սուլթանին հետ գնաց Շուշագորիոյ պա-

տերազմին 1596ին. 'ի վերին Շուշագորիս Արիայի և Խրուաթաստանի մէջ Գանիսայի սուլան, ուր Գազզիպի Միլքէիտ գուքը, այնչափ երեւելի եղաւ քրիստոնէից բանակին մէջ: Երբ Պոլիս գարձաւ երեսուսորդ քաղաքագէտն՝ հիւանդա- ցաւ հիւժմախաւ, և ոչ ինչպէս որ կ'ըսեն ժան- տախոիւ, որ Պոլսոյ մէջ շատ ջարդ ըրաւ այն տարին՝ և որ մէկ տարուան մէջ, տասնըեօթը իշ- խանուհի, 11 ուլթանին քոյրերը և շատ մը իրենց աղախիններէն մեռան: Պոլսոյ մէջ ուր ժամա- նակ մը շատ կը պատահէր ժանտախաղ այս ամե- նէն զարհուրեցիկ եղած է: Մեռելախան լուու- թիւն մը պատած էր այն ընդարձակ քաղքին մէջ, և միայն թնդանթի ձայները կը լսուէին, զոր ժամանակ ժամանակ կ'արձակէին օդը մաք- րելու համար. Պարոն Ժանը վիճակի մէջ, Խաչ- քիին վանքը ուղեց փոխադրուել, ուր որ օգը աւելի մաքուր էր: Չկրցաւ առողջանալ և մե- ռաւ յունուարի մէջ 1597ին երեսունը հինգ տարուան, զոր եկեղեցւոյն քովը թաղեցին, մեծ կրակէն առաջ՝ որով վանքը կործանեցաւ: Վան- քին երկրորդ նորոգութեան ատեն որ Իսսիւան դիի ծախքովը եղաւ, գերեզմանակաւ քարը՝ ու- ռուն՝ լրջայ կար տապանագիրը, ագիտաբար եկե- ղեցւոյ շինութեանը գործածեցին և վանքին գը- րան մը վրայ գրին այս պատմական քարը: Վեր- ջը նորէն գետեղուեցաւ անգղիացի գեսպանին գերեզմանին վրայ: Իւր աղգատուհիին նշանն՝ որ է երեք եղջերուի գլուխ, որուն տակը փորա- ցրած է տապանագիրը, գեռ աղէկ պահուած է:

Շարայարեյի

ԼՈՒՍՆԹԱԳ.

(Տես յ'էջ 141)




Իայց նոյնը չեմք կրնար ըսել Լու- սընթագի համար, այս մեծ գունտը կը տարեբերի մերինէն ամենայն դիմաք- նա 11 անգամ աւելի լայն է տրամագը- ծով և 1280 անգամ՝ աւելի և մեծազան- գուած, դարձեալ նա յամրաբայլ տա- րուան մէջ շրջան մը կ'ընէ՝ որ 12 ան- գամ մերինէն մեծ (իւր 1 տարին հա- լասար է մեր տասներկու տարուան),

և հինգ անգամ աւելի հեռաւորու- թեամբ քան ինչ որ մեծք արեւն. այն- պէս որ կեդրոն աստղէ ընդունած լոյսն ու շերմութիւնն 25 անգամ նուազ է քան զմերին. ասկէց զատ հե- ռագէտով քննուած իւր կերպարանքը կը ցուցնէ մեզ՝ որ իւր մակերևոյթը մեր երկրի ոչ պնդութիւն և ոչ հաս- տատուլիւնն ունի, և թէ իւր մթնո-

լորան անցուղարձ է բուռն հոսանաց ,
և խիտ գոլորշիք կը պատեն գրեթէ
ամենուտեք մեծ մուրրակին բուն զան-
գուածը : Շատ հաւանական է՝ թէ նա
իւր նախկին վիճակին մէջ է , և ունի
խիստ ջերմութիւն իւր մակերևութին
վրայ , և կը հակակշռէ մուրրակը պա-
տող մթնոլորտին խաւերու ահագին
ճնշման , որով և անտարակոյս նա շատ
թերի է կենաց կարեւոր հանգամանք-
ներէ : Սատակաւն բնակելի չէ եղած ,
մանաւանդ իմացական ցեղէ :

Լա գործեաւ բաւական է ժամուան
մը հետազոտութիւն , տեղեկանալու
համար անոր միգամանային և անհաս-
տատ վիճակը :

Երկու միջին գոլորշիք կը տեսնուին
անոր հասարակածին երկու կողմը ,
ասոնց վրայի բիծերն՝ որ յաճախ հա-
տուած հատուած գոլորշեք միացեալ
են իրարու հետ , յայտնի կ'ընեն իւր
թաւալական շարժման երազութիւնը .



Լուսնբազի երկու երեսք և բիծերն

այս շարժումն աւելի երազ է հասարա-
կածի քան թէ հեռաւոր լայնութեանց
վրայ . վասն զի հասարակածի վրայ
9 ժմ 50 վի . մէջ կը կատարուի , իսկ
անկից 20 . լայնութեան վրայ՝ 9 ժ . 55 վ .

Յայտմ կը նմանի արեւու՝ որ և սա
հեղուկ գունտ լինելով աւելի երազ կը
չըլի հասարակածի վրայ և դէպ ի բե-
ւեռ կը դանդաղի : Այսպիսի շար-
ժումն ինչպէս և հեռագիտաց հետազո-
տութիւնը միաբան կը ցուցնեն մեզ՝
թէ լուսնի թափն մարած արեւ մ'է , բայց
ոչ կատարելապէս ցրտացած որ դեռ
նոր սկսած է այն հանգամանաց մէջ
մտնել որոցմէ անցեր է մեր երկիրս

իւր պատմութեան նախկին ժամանա-
կաց մէջ :

Չորս մեծամեծ արբանեակք երա-
զութեամբ կը չըլին իւր շուրջը , ան-
տարակոյս երկար ժամանակէ ի վեր
երկրիս պէս պաղած , և թերեւ բնա-
կութիւն եղած պէսպէս գոյութեանց
աւելի կամ պակաս նմանութեամբ ա-
նոնց՝ որ մեր երկրաւոր կենաց մէջ կը
գտուին :

Մտերս ամերիկացի աստեղագէտ
մի Վ . Կ . Պիկկերինգ՝ եղբայր Հար-
վարդ դպրոցի դիտարանի տեսչին ,
անդրադարձաւ՝ որ այս արբանեակք
ձեւերին կը փոխէին երկարելով և բո-
լորելով իբր թէ պնդացած չըլլային :
Անտարակոյս այս դէպքիս մէջ տեսու-
թեան պատրանք մի կայ :

Սլերիշ նոր գիւտ մը ըրաւ Բեռնարդ
(ամերիկացի) վերջին ամենազօրաւոր
գործելով մի և յայտնեց այնու Լուսն-
թագի հինգեբորդ փոքրիկ արբանեկի
մ'ես գոյութիւնը՝ ծածկուած մուրրա-
կին փայլուն ճառագայթէն : Յիշաւի
նորօրինակ պիտի երևի մեզ Լուսն-
թագն այդ արբանեկէն , ծածկելով
երկնից կէսը իւր ընդարձակ սկաւա-
ռակով , և թաւալելով իւր վրայ սաս-
տիկ երազութեամբ :

Արդ մինչեւ կը դիտենք Լուսն-
թագն որ կը փայլէ գիշերուան պա-
հուն երկնից վրայ , այլ ևս չենք նայիր
անոր վրայ իբր կէտ մի անծանօթ՝ աս-
տեղաց մէջ դասուած , այլ հսկայ աշ-
խարհ մը ի կերպարանաւորութեան ,
որոյ մակերևութին վրայ ի հասարա-
կածին՝ կը դառնայ անդադար հոսանք
մը 40 բիւր մետր երազութեամբ ի
ժամու , պարուրուած գոլորշեաց մէջ ,
մրկածուի . սքանչելի գործատուն , ուր
կը պատրաստուին բոլորջը ապագայ
կենաց : Մի խօսքով , պէտք է այժմէն
տեսնել ի նմա ապագայ արեւային դրու-
թիւն մի :

Պիտի գայ օր մի և չէ հեռի , երբ
մեր թշուառ երկիրը չիլեալ պիտի

գառնայ տխուր գերեզման մի շուրջ արևու, միշտ վառ և անծերանալի:

Պիտի անհետանայ իւր բոլոր պատմութիւնը, իւր ամենայն փառք պիտի ունայնանայ, Համբրէն մարդկային ազգ չարաչար արկածեալ իրենց հետքն այլ պիտի չկարենան թողուլ. և ոչ իսկ դամբանաքար մի պիտի նշմարուի այն տեղ՝ ուր մեր վախճանեալ մոլորակը իր վերջին շունչն պիտի տայ:

Վաշ, որչափ ծիծաղաշարժ է մարդկային ամբարտաւանութիւնն: Ի՞նչ պիտի ընէին մարդկութեան երեք քառորդն՝ եթէ իրենք զիրենք չմտածէին: Միշտ ցնորից մէջ կ'որորին, եւ մի՛ թէ Սքոպենհաւէր չի՞ ազդեր մեզի թէ աշխարհս լոկ մեր գաղափարաց ներկայացումն է: Բայց երբ երկրաւոր կենաց ձայնը սկսի նուաղիլ, մարդկային յետին հայեցումք անգամ մ'այլ պիտի գառնան սեւեռին լուսնութագի վրայ, ինչպէս որ կ'ընենք մենք այսօր և ինչպէս ըրին մեր նախահարք երկրաւոր դրախտին. այն ժամանակ անտարակոյս այն մեծ գոռնտն բնակարան պիտի ըլլայ իմացական էակաց, այնչափ բարձր քան զմեզ՝ որչափ մենք կապկէն և շանէն¹, յո՞ գիտէ, այն բիւրիցս բիւր անհատներէ՝ որ բնակած են երկրիս վրայ սերընդոց ի սերունդս, արդեօք բուռ մի մոխիր պիտի մնայ, ո՞գիտէ անոնցմէ քանի՞ք անմահութեան արժանացած չեն, և թէ լուսնութագ մեծ աշխարհն՝ պիտի չընդունի իւր մէջ, ըստ հոգեկան մասին, դեր անկարօտ մոլորակիս նաւակոծեալները: Գիտեմ որ պիտի պատասխանէք ինձ, թէ բիւրաւոր տարիներէն հօն ևս բան մի չպիտի մնայ: Բայց մի՛ թէ հանդիպած չէ՞ բնաւ աստեղադարձ գեղեցիկ երեկոյ՝ յորում խորհրդածելով երկնից անհնութեան վրայ, զգա-

ծուիք մեղմիկ սարսուռ մի. հանդէպ խորին զգացման անհնութեան և յաւերժութեան: փրամարիոն

ի պատմութենէ գիտեմք՝ որ երբ յամին 1610 յունուարի 7ին Գալիլէոս իւր հնարած հեռագիտակով աստղեր կը զննէր, յանկարծ լուսնութագի մօտ երեք մանր աստղեր տեսաւ զուգահեռական դիրքով, յորոց երկուքն նորա աշկողմն էին՝ իսկ միւսն ձախակողմն: Սակայն երկրորդ օրն տեսաւ՝ որ այդ երեք աստղերնայլ ձախ կողմն կը գըտուէին: Այդ երեկոյ չէր կրնար լուսնութագի շարժմամբ բացատրել. պէտք էր որ նոյն աստեղք իրենց դիրքն փոխած լինէին: Եւ ահա իւր այս կարծիքը ստուգեցին հետեւալ աւուրց գիտողութիւնք. այլ ևս չտարակուսեցաւ՝ թէ անոնք նորա արբանեակք են, ուրոնք անոր չորս կողմն կը շրջէին: Իսկ յունուարի 13, 20, 23 օրերը յայտնի տեսաւ չորս արբանեակ. և այսու ստուգեց չորս արբանեակց գոյութիւնը և նոցա շարժումն, զոր և անուանեց յաշուն Մեդիկեանց:

Նոյն գիտողութիւնքը կատարուած կը գտնեմք և ի Գերմանիա Մարիոս աստեղագիտէն, նոյն տարին և նոյն օրն: Արդ որո՞ւն ընծայելու է լուսնութագի արբանեակաց գիւտը: Այժմ թէպէտ մեծամասնութիւնն Գալիլէոսի կ'ընծայեն զայն, սակայն Մարիոսի դրած անուամբք կը կոչեն: Այս գիւտին հետեւեալն եղաւ հաստատութիւն կոպեռնիկեան գիւտին՝ նկատմամբ արեային դրութեան: Այնուհետեւ աստեղագիտութիւնն մեծաքայլ յառաջեց, նորանոր գաղտնիք սկսան յայտնուիլ, իսկ լուսնութագի արբանեակաց խաւարման ձեռք չափեց Հռոմեր լուսոյ երազութիւնը յամին 1675ին, և 30 բիւր հազար մետր գտաւ զայն մի մանրերկրորդի մէջ: Հեռագիտով գրեթէ ամէն օր տեսանելի է արբանեակաց խաւա-

1. Հեղինակին խանդավառ երևակայութեան ընծայելու է այս տեղ իմաստասիրական վարդապետութեան դէմ ըրած սխալն:

բում, երբեմն և երկուց միանգամայն. զոր օրինակ այս տարի յուլիս 17ին առաջնոյն և երկրորդին. և օգոստոս 2ին առաջնոյն և երրորդին պիտի պատահէ. ինչ տեսարան պիտի լինէր եթէ դիտողն լուսնթագի մէջ գտուէր՝ ուր տարւոյ մէջ 1433 խաւարմունք արբանեկաց կը տեսնուին, և ոչ պակաս նոյնչափէն՝ արեւու, Բաւական զօրաւոր դիտակով կը տեսնուի արբանեկի ըստուերին լուսնթագի վրայ չըլիւն: Ինչպէս կը պատահի՝ որ լուսնթագն իւր ստուերով մի կամ երկուք միանգամայն խաւարեցնէ, այնպէս ևս կարելի է պատահէ՝ որ մի կամ երկուքն միասին անցնին լուսնթագի սկաւառակի առջևէն: Երկուց՝ զոր օրինակ առաջնոյն և երկրորդին՝ միանգամայն անցնելն այս տարի յունուարի 15ին պատահեցաւ. և սեպտեմբերի 25ին պիտի պատահի առաջնոյն և երրորդին անցնելն:

Լուսնթագն երկուքը խաւարեցնելու ժամանակ՝ կրնայ ուրիշ մը նորա առջևէն անցնիլ: Այսպիսի դէպք այս տարի չպատահիր. այլ անցեալ տարի հոկտեմբերի 26ին հանդիպեցաւ, զի մինչդեռ երկրորդն և երրորդ կը խաւարէին, առաջինն լուսնթագի առջևէն կ'անցնէր: Այս տեսարաններէն զատ կը տեսնուի արբանեկաց զիրար խաւարեցնելն. այսպիսի դէպք ամիսն անգամ մը կը պատահի, և երբեմն ամիսն երկու անգամ: Լուսնթագի տրամագիծն այնքան լայն է և արեւն այնքան հեռի է իւրմէ, որ իւր ձգած կոնաձև ստուերն գրեթէ վերջին արբանեկին կրկին հեռաւորութեան կը հասնի, և ստուերին լայնութիւնն այնքան է՝ մինչեւ չորս արբանեկ եթէ միայլոր մի մեանց մօտ կանգնին, զամենքն ի միասին կրնայ խաւարեցնել: Եթէ իրենց պարունակներ նոյն դիրք ունեային՝ այս կը պատահէր. բայց երեք առաջնոց պարունակաց ուղղութիւնն այնպիսի է՝ որ միշտ կէս բոլորակ կը ձևացնեն. և իրենց պարունակներ լու-

սնթագի տրամագծէն աւելի ընդարձակ լինելով, չէ կարող սա զամենքն միանգամայն խաւարեցնել: Արդ անոնց խաւարման կարգն այս է. Առաջին, որ և հինգերորդ՝ ըստ կարգի դիտին, փոքր է քան զլուսինն, և երկրիս տրամագծին 79.172 որդ մասին չափ է. իւր թաւալական շարժման նայելով կրնանք հաստատել՝ թէ ամէն օր պէտք է խաւարի, և երբեմն օրն երկու անգամ ևս: Գտողին հաշուով՝ սա 17փ. և 36վ. ի մէջ իւր ընթացքը կը կատարէ. այլ ստուգուեցաւ՝ որ 11փ. 56վ. անգամ մը լուսնթագի շուրջ դառնայ. և իւր պայծառութիւն կը հաւասարի 13երորդ կարգի աստեղի — Երկրորդն՝ որ նախկին կարգաւ առաջին արբանեկն էր, մեծ է քան զլուսին՝ որքան փայլածուն այս արբանեկէն, և երկրիս տրամագծին 1/3.2 մասն է. դեղնագոյն է, և իւր պայծառութիւնն 6-7 երրորդ կարգի աստեղ կը հաւասարի. և կը խաւարի 1օր 18փ. 20վ. 8մ. անգամ մի: — Երրորդն նոյնպէս քան զլուսին մեծ է, և փոքր քան զերկրորդ արբանեկն. իւր տրամագիծն երկրիս 1/3.6 մասն է. և կը համարուի թէ այս արբանեկին խիտ և պինդ ըլլայ քան զամենսին. և 3օր 13փ. 18վ. անգամ մի կը խաւարի. իսկ իւր լուսոյ պայծառութիւնն հաւասար է երկրորդ արբանեկի լուսոյն: Չորրորդն՝ պայծառ գոյն է քան զամենքն. և աչք տեսանելի պիտի ըլլար՝ եթէ լուսնթագի ճառագայթք չխափանէին. իւր պայծառութիւնն 5-6 երրորդ կարգի աստեղ լուսոյ կը հաւասարի: Սա մեծ է քան զփայլածուն և սակաւիկ ինչ փոքր քան զՀրատ. իւր տրամագիծն երկրիս 172.21 մասն է. և կը խաւարի 7փ. 44վ. անգամ մի: — Հինգերորդն 7 երրորդ կարգի աստեղ պայծառութիւն ունի. սակաւ ինչ մեծ է քան զփայլածուն, կարմրախառն թուի գոյն ունի: Նախորդ աստեղագէտը կ'ըսէին, թէ սա լուսնթագի չափ անգութիւն չունի ու-

րոց կարծիքը փրամարիոն մերժեց։ Այս արբանեակս 16օր 16ժ. 21վ. անգամ մի կը խաւարի։

Լուսնթագն Երեւակի ձգողականազդեցութիւնն ուստի կրէ, կը իւր շարժումն չէ մի օրինակ. զի այս երկուց միոյն յառաջացած ժամանակ միւսն համեմատաբար յետ կը մնայ իւր ընթացից մէջ։ Այս տարբերութեանց բարձրագոյն կէտն է՝ Երեւակի համար 49', իսկ Լուսնթագի համար 21' միայն։

Լուսնթագի արբանեկաց առաջ երթալն ետ մնալն, կարելի՛ է արդեօք Երեւակի նոյն ազդեցութեան արդասիք համարել։ Կամ ընդհակառակն, չէ՞ հընար՝ արբանեկաց իրարու վրայ ըրած ազդեցութեան ընծայել. վասն զի ինչ-

պէս Լուսինն, որ Երկրիս 1749 մասն է, Երկրիս վրայ՝ մատուցութեան համար ազդեցութիւնն ունի աւելի քան զարեւ 6 առ. 2 համեմատութեամբ, նոյն պատճառաւ և արբանեակը Լուսնթագի անշուշտ կ'ազդեն իրարու վրայ աւելի քան զԵրեւակ։ Եթէ յայսմ՝ Երեւակի ազդեցութիւնն նախադաս համարուէր, արբանեկան շեղմունք միայն ի մերձակիտի Երեւակին պիտի տեսնուին. իսկ որովհետեւ ի հեռակիտին ևս կը պատահին նոյն շեղմունք, ուր Երեւակի ազդեցութիւնն իսպառ կը տկարանայ, հաւանական է՝ թէ արբանեկաց փոփոխակի ազդեցութեան արդիւնք են անոնք։

— 300 —

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԳՐՈՑ

ԸՍՏ ՀԱՅԿԵԱՆ ՇՐՋԱՆԻ



Մինչև ցարդ ժամանակագիրք ջանացեր են օտար ազգաց ժամանակագրութիւնը սուրբ Գրոց ժամանակագրութեան պատշաճեցնել. եղբեր են անշուշտ՝ սուրբ Գրոցն այլ օտարազգոյն հետ համաձայնեցնողներ. սակայն Հայկայ շրջանին հետ համաձայնեցնել ոչ դը մտածեր է, և այս է մեր նպատակն։

Ըստ Հայկայ շրջանին Ադամէն մինչև 1888 յետ Քրիստոսի՝ 7300 տարի է. որ է ըսել հինգ ամբողջ շրջան՝ 1460 տարիներու գումարին։ Ասոնցմէ եւրեքն կը ձգին Հայկէն մինչև 1888 փրկչական թուականն, որ է 4380 տարի. երկուքն այլ Հայկէն մինչև Ադամ՝ 2920 տարի։ Արդ եթէ և սուրբ Գրոց ժամանակագրութիւնն Ադամէն մինչև

փրկչական 1888 թուականն՝ ընէ 7300 տարի, ըսել է՝ թէ սուրբ Գրոց ժամանակագրութիւնն և Հայկայ շրջանն համաձայն կ'ընթանան. որով ժամանակագիրք, այս (Հայկայ) թուականս իբր ուղղիչ կրնան առնուլ. զայս կը մնայ մեզ ապացուցանել։

Հօս հարկ է նախ ակնարկ տալ այլ և այլ ժամանակագրաց թուականաց վրայ. ինչպէս բազմաթիւ են ժամանակագիրք, սյսպէս ևս Ադամէն մինչև Քրիստոս եղած տարիներու թուոց թուականք բազմաթիւ են, որով հարկ կ'ըլլայ այլ և այլ դասակարգութեան բաժնել։ Առաջինն այն է՝ որ զուտ Եւրոպականի վրայ հիմնեալ է. պաշտօնական այս թուականիս՝ կը համարին, թէ ստեղծումն Ադամայ՝ Քրիստոսէ